ցաւ, կարծես, և քարերի ընտրութիւնը, Տեղերից հանեցին և Նոր Ջուղայ տարան ընդ ամենը տասն և հինգ քար, որոնցից երկուսն այն քարերն էին, որ կազմում էին վէմ քարը, երեք բեմի քար, երկու բեմի հիւսիսային և հարաւային աստիճանների, մի հատ Իջման տեղի քար, մի հատ աւազանի քար, չորս հատ դրսի անկիւնաքարեր (վէմ անկեան) և երկու քարէ աշտանակներ Իւղաբերից աւետարանի կերոնների համար։

Քսան և հինգ տարու չափ Նոր Ջուղայում մնալուց յետոյ՝ 1638 թուին սեպտեմբերի քսանին Ս. Աջը վերադարձաւ Ս. Էջմիածին, ուր և մնում է մինչև օրս։ Այս անգամ Փիլիպոս Հաղբակեցի կաթուղիկոսի (1633—1655 թ.) հնարագիտութեանն և ջանքերին ենք պարտական։ Աղգի հայրը, որ իւր եռանդուն գործունէութեամբ դեռ Մովսէս Գ. Սիւնեցու ժամանակից յայտնի ծառայութիւններ արաւ Ս. Էջմիածնին և չթողեց, որ Տաճկաստանի Հայոց մէջ առանձին կաթուղիկոսութիւն հաստատուի Տարոնոյ Ս. Կարապետի վանքում, ոչ թէ խնայում էր Նոր Ջուղայի Հայոց նուիրական մասունքներ, այլ կամենում էր վերականգնել Ս. Էջմիածնի կեդրոնական նշանակութիւնն Հայոց եկեղեցու համար, երկիւղ կրելով, որ չլինի թէ Ս. Աջի պատճառով Նոր Ջուղայի վանքը կաթուղիկոսարան դառնայ, իսկ Մայր Աթոռը զրկուի իւր աւանդական պա-